և 200 պալատականաց, այլ փութամ զի գործն ձեր կատարեսցի, և օրն տարաժամեալ մեկնեցան վարդապետքն։

Եւ 'ի վաղիւն չոքան առ Ոստիկանն Մէհէմմէտ Պէյ և պատմեցին նմա զամենայն եղեալսն, և նորա յուսադրեալ զնոսա խոստացաւ խօսիլ ընդ Բդեշխին և ընդ երկրորդին, որ և արար իսկ չհայեցեալ 'ի խօթութիւն իւր։ Իսկ Բեահեայն վերստին 'կոչեալ առ ինքն զվարդապետսն ասէ՝ վասն Ծննդեան և Աստուածածնի 1500 քսակս խնդրէ 'ի ձէնջ Բդեշխն, ապա թէ ոչ՝ միայն վասն Ս. Յարութեան 100 քսակ. ետուն պատասխանի՝ ծերունիքն զայդ ոչ հրամայեցին մեզ, ասէ՝ ընդէ՞ր եկիք. ասեն՝ Կուսակալն և դուք գրով խնդրեալ էիք և Ծերակոյտն զմեզ առաքեաց, զի ոչ երբէք յուսային թէ առանց քննութեան և իրաւանց առնէք զայդ։ Ասէ՝ մի լիցի ձեզ 'ի մէջ բերել զԾնունդ և զԱստուածածին, մոռացէք զայնս, և վասն այլոց հոգացէք զԲդեշխն. նոքա ասեն՝զի՞նչ արարիք զի հոգասցուք, միթէ Յոյնք հանեա՞լ էին զմեզ 'ի վանաց մերոց՝ և վերըստին մուծէք զմեզ անդր, և կամ չինեցա՞ք ինչ 'ի տաճարին Ս. Յարութեան, այլ միայն 'ի բաժին տեղիս մեր ըստ բնականին կախեցաք պատկերս և կանթեղս և այլքն մնացեալ են. Բեահեայն ասէ՝ այդոքիկ բանք ձեր չեն ինչ, զի զոր ինչ արարիք յաւուրս Խօճաքեանին, կարող եմք աւերել զամենայն, և առնուլ 'ի ձէնջ զոր կամիմքս և տալ պատասխանի Տէրութեան՝ (դիտուին Բեահեային էր տալ քանդել զիւղարերիս սեղանն և նշաւակել զաղդն). զի հակառակորդք ձեր առ այս ջանան միշտ և աղաչեն և խոստանան բազում ինչ։ Ասացին՝ մեք ընդ հրամանաւ և հպատակ Տէրութեան եմք, արարէք որպէս վայելէ մեծութեան ձերում։ Եւ նորա բարկացեալ ասէ՝ կատարեմք, զոր ասեմքս՝ առնումք՝ զոր պահանջեմքս, դուք ընդէ՞ր եկիք այսր, միթէ 'ի խնճո՞յս հրաւիրեցայք, և բարկութեամբ ելեալ դնաց անտի։

Իսկ Հրեայ Սողոմոնն սկսաւ մխիթարել եւ յորդորել զնոսա. չկամիմ ասէ թափիլ ձեզ 'ի դրամոց, և ոչ վշտանալ Պատրիարքին եւ Ծերունեաց, սակայն սոքա բռնութեամբ առնուն 'ի ձէնջ զդրամն, և յառակ նշաւակի կացուցեալ զձեզ, աւերեն զոր ինչ արարիք 'ի Ս. Յարու-